գիտարանային բնոյթի բարոյագիտական աշխատութիւն, որն նախատեսուած է նախ եւ առաջ ուսանողութեան համար, երկրորդ, որ հեղինակը նպատակամղուած է կատարելագործելու գիրքը՝ լրացումների, խմբագրումների, նոր թեմաների ներառման ճանապարհով: Այլ խօսքով, սա Սարգիս ՔԷհեաեանի աշխատութեան առաջին հրատարակութիւնն է, իսկ մենք արդէն սպասում ենք լրացուած, նոր թեմաներով հարստացուած (օրինակ, արեւելեան կրօնափիլիսոփայութեանց բարոյագիտական ուսմունքներով), ընթերցողների շինիչ քննադատական դիտողութիւնները նկատի առնուած ու թերեւս հայ բարոյագիտական մտքի մասին ակնարկներով ուռճացած, հեղինակի դիրքորոշումները ու գնահատականները յստակօրէն արտայայտուած երկրորդ հրատարակութեանը:

Սէյրան Ա. Չաքարեան

Երեւանի պետական համալսարանի
փիլիսոփայութեան պատմութեան ամբիոնի վարիչ,
փիլիսոփայական գիտութիւններու դոկտոր, պրոֆեսոր